

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Արագածոտնի մարզի Ճաղկահովիտ համայնքի «Գեղաձորի բնակավայրի Յուրիկ Կիրակոսյանի անվան մանկապարտեզ» ՀՈԱԿ-ը հայտարարում է մրցույթ դաստիարակի թափուկ պաշտոնի համար

1. ԾԱՂԿԱՅՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ «ԳԵՂԱՁՈՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՅՈՒՐԻԿ ԿԻՐԱԿՈՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀՈԱԿ-Ի ԴԱՍՏԻԱՐԱԿԸ

Աշխատանքային և լիազորություններ և պարտականությունները՝

- 1) պլանավորում և իրականացնում է սաների ուսուցումն ու դաստիարակությունը, կենսագործունեությունը՝ նախադպրոցական կրթության պետական չափորոշիչներին, կրթական ծրագրերին համապատասխան.
- 2) ուսումնասիրում է սաների անհատական ունակությունները, հետաքրքրությունները և հակումները.
- 3) նպաստում է սաների մոտգործունեության տարբեր ձևերի հանդեպ հետաքրքրասիրություն և բացահայտմանը.
- 4) աշխատանք է տանում սաների վարքի շեղման, վնասակար սովորությունների վերացման համար.
- 5) կատարում է ամենօրյա աշխատանք սաների սոցիալ-հոգեբանական հարմարունակության (ադապտացիայի) համար.
- 6) բուժանձնակազմի հետ համատեղ կանոնավոր իրականացում է համալիր միջոցառումներ՝ ուղղված սաների առողջության ամրապնդմանը, հոգեբանական զարգացմանը,
- 7) սաների հետ տարվող ուսումնադաստիարակչական գործընթացում կիրառում է կրթության պետական կառավարման լիազորված մարմնի կողմից երաշխավորված ուսումնական ձեռնարկներ և նյութեր, մանկավարժական արդի տեխնոլոգիաներ, մեթոդներ, հնարներ.
- 8) խմբում ստեղծում է անհրաժեշտ պայմաններ՝ առօրյան, ուսումնադաստիարակչական աշխատանքները արդյունավետ իրականացնելու համար.
- 9) ակտիվորեն կիրառում է հաստատության մեթոդկաբինետի համապատասխան նյութերը.
- 10) երաժշտության դաստիարակի, ֆիզիկական գիշի, այլ մանկավարժական աշխատողներին հետ նախապատրաստում է տոները, ժամանցային, մարզական պարապմունքները.
- 11) ժամանակին տնօրինությունը, բուժքրոջը, ծնողներին տեղեկացնում է սաների առողջական վիճակի փոփոխությունների մասին.
- 12) վարում է սաների հաճախումների մատյանը.

- 13) վերլուծում է իր կողմից իրականացվող ուսումնադաստիարակչական գործընթացը, կատարում ինքնավերլուծություն, իրականացնում է բարելավման աշխատանքներ.
- 14) մասնակցում է մանկավարժական խորհրդի նիստերին, խորհրդատվություններին.
- 15) ծնողներին հետ տանում է աշխատանք՝ ընտանիքում երեխաների դաստիարակության հարցերի ուղղությամբ, ներգրավում և խթանում է հաստատության հետակտիվ համագործակցությանը.
- 16) խնամքով է վերաբերվում խմբին հատկացված գույքին, սարքավորումներին, պիտույքներին.
- 17) վարում է գույքի, խաղալիքների հաշվառումը.
- 18) համագործակցում է դաստիարակի օգնականի հետ.
- 19) ըստ ժամանակացույցի՝ սահմանված կարգով անցնում է բժշկական զննություններ:

2. Նշված պաշտոնն զբաղեցնելու համար պահանջվում է՝

- ա)** միջին կամ բարձրագույն մասնագիտական կրթություն համապատասխան որակավորմամբ կամ միջին կամ բարձրագույն մանկավարժական կրթություն և վերջին տասը տարվա ընթացքում նախադպրոցական կրթության ոլորտում առնվազն երեք տարվա մանկավարժական գործունեության ստացում,
- բ)** համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն.
- գ)** իր պարտականություններին կատարման համար անհրաժեշտ իրավական ակտերի իմացությունն ունենալ վերաբերում են կրթության բնագավառին, (Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, «Կրթության մասին», «Հանրակրթության մասին», «Նախադպրոցական կրթության մասին», «Լեզվի մասին», «Երեխայի իրավունքներին մասին», «Պետական ոչ առևտրային կազմակերպություններին մասին», «Լիցենզավորման մասին», «Տեսչական մարմիններին մասին», «Տեղական ինքնակառավարման մասին», «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» օրենքները, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգիրքը, «Նախադպրոցական ուսումնական հաստատության օրինակելի կանոնադրությունը», Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչը, կրթության պետական կառավարման լիազորված մարմնի համապատասխան նորմատիվ իրավական ակտերը.),
- դ)** մանկավարժության, հոգեբանության, ֆիզիոլոգիայի, հիգիենայի հիմունքները, ուսումնամեթոդական փաստաթղթերի վարման սկզբունքներին:

3. Մրցույթին մասնակցելու իրավունք չունենի այն անձը, ով՝

- 1) դատական կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ .
- 2) դատական կարգով զրկվել է մանկավարժական գործունեությամբ զբաղվելու իրավունքից .
- 3) տառապում է ՀՀ կառավարության կողմից հաստատված այնպիսի հիվանդությամբ, որը կարող է խոչընդոտել մանկավարժական գործունեության իրականացմանը .
- 4) դատապարտվել է հանցագործության համար, և դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չէ, բացառությամբ այն դեպքերի, երբ դատապարտվել է ոչ դիտավորյալ հանցագործություն կատարելու համար :

4. Դիմող ՀՀ քաղաքացիները մրցույթին մասնակցելու համար պետք է « Գեղաձոր բնակավայրի Յուրիկ Կիրակոսյանի անվան մանկապարտեզ » ՀՈԱԿ ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը .

- 1) դիմում (Ձև 1).
- 2) կրթության մասին փաստաթուղթ (դիպլոմ).
- 3) անձը հաստատող փաստաթուղթ .
- 4) աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք կամ աշխատանքային գրքույկ (առկայության դեպքում).
- 5) ինքնակենսագրություն (Ձև 4).
- 6) մեկլուսանկար՝ 3x4 չափի .
- 7) այլ պետություններին քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ .
- 8) Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև գինվորական գրքույկ կամ գինվորական կցագրման վկայական .
- 9) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում):

5. Թափուր պաշտոնի համար սահմանված դրույքը - 1 , պաշտոնային դրույքաչափը՝ (ներառյալ հարկերը և տուրքերը) 127. 500 /մեկ հարյուր քսանյոթ հազար հինգ հարյուր /ՀՀ դրամ

Մրցույթը կկայանա **2026 թվականի հունիսի 23-ին , ժամը 16:30-ին** , «Գեղաձոր բնակավայրի Յուրիկ Կիրակոսյանի անվան մանկապարտեզ » ՀՈԱԿ -ում , հասցեն՝ գ. Գեղաձոր 1-ին փողոց 2 . 32/1

Դիմումներին դրույթով ներկայացվող ժամկետը **2026 թվականի հունիսի 15-ն է** , ամենօր ժամը 9: 00-17: 00, բացի 2աբաթ և կիրակի օրերից : Մրցույթն անցկացվելու է երկու փուլով՝ **թեստավորման և հարցազրույցի** : **Հարցաշարը հաստատված է ՀՀ կրթության , գիտության , մշակույթի և սպորտի նախարարի 22. 10. 2024 թվականի N1981-Ա/2 հրամանով :**

Այլ տեղեկություններ համար դիմել «Գեղաձոր բնակավայրի Յուրիկ Կիրակոսյանի անվան մանկապարտեզ» ՀՈԱԿ (հեռ.՝ 093 65-08-11) կամ համայնքապետարանի մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի, սոցիալական աջակցություն բաժին (հեռ. 09416-68-66):

ԾԱՂԿԱՅՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ «ԳԵՂԱՁՈՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՅՈՒՐԻԿ ԿԻՐԱԿՈՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀՈԱԿ